

# ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԿ

## ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ է հողը: Թվարկեք հողի արտաքին հատկանիշները:
2. Ինչպիսի ազդեցություն է թողնում հողի վրա մարդու տնտեսական գործունեությունը:
3. Ի՞նչ է հողի մեխանիկական կազմը, դրա դերը հողի բերրիության գործում:
4. Հումուսի առաջացումը, դրա նշանակությունը հողի բերրիության գործում:
5. Ի՞նչ է հողի բերրիությունը, դրա տեսակները և բարձրացման ուղիները:
6. Ի՞նչ է հողի էռոզիան և դրա հասցրած վնասը: Թվարկեք հողի էռոզիայի դեմ պայքարի միջոցառումները:
7. Որո՞նք են բույսի կյանքի գործոնները և պայմանները:
8. Ի՞նչ է ցանքաշրջանառությունը, ինչ՞ումն է նրա առավելությունը անհերթափոխ ցանքերի նկատմամբ:
9. Ի՞նչ է նախորդը: Մշակաբույսերի հաջորդականության պատճառները:
10. Ի՞նչով է տարբերվում զբաղված ցելը մաքուրից և ինչումն է նրա առավելությունը:
11. Ի՞նչ նշանակություն ունեն բազմամյա բակլազգի խոտաբույսերը ցանքաշրջանառության մեջ և ինչ բնական պայմաններում են դրանք ավելի արդյունավետ:
12. Ի՞նչպիսի արտադրական նշանակություն ունեն միջանկյալ մշակաբույսերը ցանքաշրջանառության մեջ:
13. Ինչու՞ են ցանքաշրջանառությունները դասակարգում և ըստ ինչպիսի հատկանիշների:
14. Ի՞նչպես են նախագծում և իրացնում ցանքաշրջանառությունները:
15. Հասկացություն հողի մշակման, խնդիրների և դրա նշանակության մասին:
16. Հողի մակերեսային մշակման ձևերը:
17. Հողի մշակման առանձնահատկությունները, աշնանացան մշակաբույսերի համար:
18. Հողի մշակումը գարնանացան մշակաբույսերի համար:
19. Ի՞նչպես մշակել հողը ջրային և քամու էռոզիայից պաշտպանելու համար:

## ՄՆՆԴԱՏԱՐՐԵՐ ԵՎ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

1. Թվարկեք բույսի կյանքի համար անհրաժեշտ սննդատարրերը:
2. Որոնք են մակրոտարրերը, ի՞նչ դեր են խաղում բույսի կյանքում և դրանց անբավարարության հետևանքով բույսի մոտ ինչպիսի փոփոխություններ են առաջանում:
3. Որոնք են մեզոտարրերը, ի՞նչ դեր են խաղում բույսի կյանքում և դրանց անբավարարության հետևանքով բույսի մոտ ինչպիսի փոփոխություններ են առաջանում:
4. Որոնք են միկրոտարրերը, ի՞նչ դեր են խաղում բույսի կյանքում և դրանց անբավարարության հետևանքով բույսի մոտ ինչպիսի փոփոխություններ են առաջանում:

5. Ի՞նչ նշանակություն ունեն պարարտանյութերը մշակաբույսերի բերքատվության բարձրացման գործում, դրանց արդյունավետությունը:
6. Որո՞նք են օրգանական պարարտանյութերը և որտեղի՞ց են ստացվում:
7. Ծղոտը որպես պարարտայութ, նրա դերը և նշանակությունը:
8. Ծղոտի դերը և այրելու հետևանքները:
9. Աէրոբ և անաէրոբ բակտերիաներ, նրանց դերը և նշանակությունը:
10. Ինչպե՞ս հաշվել սննդատարրերի էլքը մեկ միավոր բերք կազմակերպելու համար:
11. Ի՞նչ է իենից ներկայացնում կանաչ պարարտացումը և որտեղ է այն ավելի արդյունավետ:
12. Ի՞նչ են իրենցից ներկայացնում բակտերիալ պարարտանյութերը և որտեղ է այն ավելի արդյունավետ:
13. Բնութագրեք հանքային պարարտանյութերը և դրանց օգտագործման եղանակները:
14. Թվարկեք առավել կիրառվող ազոտ, ֆոսֆոր և կալիում պարունակող պարարտանյութերի ֆիզիկական և քիմիական հատկությունները:
15. Ինչպե՞ս հաշվարկել 1 հա համար հանքային պարարտանյութերի անհրաժեշտ չափաքանակները:
16. Ի՞նչ են իրենցից ներկայացնում տերևային սնուցիչները, ինչպե՞ս են օգտագործում, նշել մի քանիսի անվանումները:

## ՄԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Մերմնաբուծության էությունը և նպատակը:
2. Ի՞նչն է համարվում սերմնաբուծության հիմնական օբյեկտ:
3. Ի՞նչ է սորտը: Որո՞նք են հիբրիդները, և ինչո՞վ են տարբերվում սորտերից:
4. Ցանքի նորմայի հաշվարկ:
5. Աշնանացան մշակաբույսերի ցանքի օպտիմալ ժամկետները ԼՂՀ պայմաններում:
6. Գարնանացան մշակաբույսերի ցանքի օպտիմալ ժամկետները ԼՂՀ պայմաններում:
7. Հացահատիկային մշակաբույսերի սերմի ցանքի նորմայի որոշումը:

## ԲՈՒՅՄԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ո՞ր բույսերն են կոչվում մոլախոտեր և ինչպիսի՞ վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Դասակարգեք մոլախոտերը:
2. Ինչպիսի եղանակներով կարելի է կանխել մոլախոտերի տարածումն:
3. Ի՞նչպես մաքրել վարելահողերը մոլախոտերի սերմերից և վեգետատիվ բազմացման օգաններից:
4. Ի՞նչ է իրենից ներկայացնում հերբիցիդները: Ըստ ազդեցության ի՞նչպիսի հերբիցիդներ կան:
5. Պայքարի համալիր միջոցառումների էությունը մոլախոտային բուսականության դեմ:
6. Հացազգի մշակաբույսերի սերմերի նախացանքային ախտահանում: Ինչպիսի՞ ախտահանիչներ գիտեք:
7. Ցորենի առավել տարածված վնասատուները և պայքար դրանց դեմ:

8. Յորենի առավել տարածված սնկային հիվանդությունները և պայքար դրանց դեմ:
9. Պայքարի միջոցառումների համակարգը ցորենի ցանքերում:
10. Եգիպտացորենի առավել տարածված վնասատուները և պայքար դրանց դեմ:
11. Եգիպտացորենի առավել տարածված հիվանդությունները և պայքար դրանց դեմ:
12. Ինչպիսի՞ վնասատուների և սնկային հիվանդությունների կողմից է վնասվում սոյան:
13. Նշեք արևածաղկի տարածված հիվանդությունները ու վնասատուները, և պայքարի միջոցառումները դրանց դեմ:
14. Եգիպտացորենի ցանքերում վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցառումներ ինչպիսի՞ համակարգ կառաջարկեք:
15. Ի՞նչ մեթոդներ են ներառում համալիր պայքարի միջոցառումները:
16. Դասակարգեք թունաքիմիկատները, տվեք անվանումները:
17. Պայքարի միջոցառումներ մկնանման կրծողների դեմ:

## ՈՌՈԳՈՒՄ

1. Ոռոգման հիմնական նպատակը:
2. Հողի կառուցվածքում ջրի տեսակները:
3. Մազանոթների ազդեցությունը հողում խոնավության պահպանման վրա:
4. Հողի ակտիվ շերտ:
5. Գրունտային ջրեր, և դրանց ազդեցությունը բույսի արմատային համակարգի վրա:
6. Ծակոտկենություն:
7. Խոնավություն:
8. Ոռոգման համակարգի բաղադրամասերը և ջրի ինքնարժեքի ձևավորման վրա ազդող գործոնները: Ջրի միջին ինքնարժեքը և գործող սակագինը:
9. Բույսի ջրային հաշվեկշիռ:
10. Ի՞նչ է տրանսպիրացիան:
11. Ի՞նչ խնդիրներ ենք լուծում ոռոգման միջոցով հողի ակտիվ շերտի օպտիմալ խոնավացման միջոցով:
12. Ոռոգման վրա ազդող գործոնների դասակարգումը:
13. Ի՞նչ է ոռոգման ռեժիմը:
14. Գումարային գոլորշիացում կամ էվապոտրանսպիրացիա:
15. Ինչպե՞ս կարելի է որոշել գումարային գոլորշիացման չափը, եղանակները և սարքերը:
16. Գումարային գոլորշիացման որոշման տարրայի առավելությունները:
17. Ջրման նորմայի չափողականությունների անցումային բանաձև:
18. Ոռոգման և պարարտացման ծրագրի նշանակությունը:
19. Ոռոգման եղանակների դասակարգումը:
20. Մակերեսային ոռոգում:
21. Ոռոգում անձրևացմամբ:
22. Ենթահողային ոռոգում:
23. Կաթիլային ոռոգում:
24. Ջրի և պարարտանյութերի հոսքը կաթիլային ոռոգման դեպքում:

25. Ջրի մաքրման ֆիլտրերը, դասակարգումը և դրանց նշանակությունը: